ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

29 ապրիլի Շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

62
(2728)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԽԱԲԵԼ ԵՆ. ՄԱՍ 17

«Հայաստանը Ադրբեջանի հետ Լաչինի միջանցքում անցակետ տեղադրելու վերաբերյալ բանակցություններ չի վարում, միջանցքի եւ դրա ռեժիմի շուրջ բանակցությունները վաղուց ավարտված են». սրանք ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի խոսքերն են՝ասված այս տարվա մարտի 22-ին խորհրդարանում: Նրա հայտարարությունից մեկ ամիս անց ունենք մի իրավիճակ, երբ անցակետը տեղադրված է, եւ այդ պատճառով էլ ադրբեջանական կեղծ բնապահպանները դադարեցրել են ակցիան: «Դրանք նշված են 2020 թվականի նոյեմբերի 9-ի հայտարարության մեջ: Դրա շրջանակներում Ադրբեջանը պետք է երաշխավորի միջանցքի անխափան տեղաշարժը: Այս ռեժիմն ու ձեռք բերված պայմանավորվածությունները վաղուց ամրագրված են»,- ասել էր Միրզոյանը՝պատասխանելով պատգամավորների հարցերին: Այսինքն՝ստացվում է՝հերթական անգամ ՀՀ իշխանությունների հայտարարություններն իրականություն չեն դառնում. նրանք ստում են:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանյանի որդին՝Արա Օսկանյանը, ներկայացրեց, թե ինչ է կատարվում այն գործով, որով անցնում է նաեւ ինքը: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ապրիլի 20-ին ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանյանի որդու՝Արա Օսկանյանի գործողությունների մասով ՀՀ քննչական կոմիտեում քրեական գործ է հարուցված՝խարդախության հատկանիշներով: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝Օսկանյանի որդին կալանքի տակ գտնվող գույքը վաճառել է, ինչի առիթով իրավապահներին հաղորդում է ներկայացվել հանցագործության մասին, որտեղ էլ տրվել է Օսկանյանի որդու՝Արա Օսկանյանի անունը: Ավելի ուշ ԻԻՀ քաղաքացի Փարվիզ Նոսրաթին մանրամասներ էր հայտնել՝նշելով , որ ինքը հանդիսանում է Արա Վարդանի Օսկանյանի գործողություններից տուժած անձ, քանի որ հավատալով վերջինիս խոստումներին՝նրան վճարել է 8 մլն 400 հազար ՀՀ դրամ կանխավճար (8.200.000 դրամը՝փոխանցմամբ, 200.000 դրամը՝առձեռն), որպեսզի պայմանավորված արժեքով վաճառի Բագրատունյաց փողոցի 67 հասցեի անշարժ գույքը, սակայն պարզվել է, որ այդ գույքի վրա մեծ գումարի պարտավորության համար արգելանք է դրված, եւ ի սկզբանե Արա Վարդանի Օսկանյանի համար ակնհայտ է եղել, որ արգելանքի պատճառով չի կարող վաճառել այն: Արա Օսկանյանի որդին մեզ հետ զրույցում ներկայացրեց այս իրավիճակի վերաբերյալ իր տեսակետը՝մանրամասնելով, որ ամեն ինչ այնպես չի եղել, ինչպես ներկայացվել է:

Ադրբեջանի մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանն առաջիկայում այց չի նախատեսում Արցախ: Այսպիսով, Արցախն արդեն 5 ամիս է՝շրջափակման մեջ է. միայն երեկ հայտարարեցին, թե անցակետը դրել են, միջանցքը մտադիր են բացել: Դեռեւս 2020թ.-ի դեկտեմբերի 12-ից Ադրբեջանը կեղծ բնապահպանական պատճառաբանություններով փակել էր Հայաստանն Արցախին ու արտաքին աշխարհին կապող միակ ճանապարհը՝Լաչինի միջանցքը, իսկ արդեն ապրիլի 12-ից ամբողջական շրջափակման է ենթարկել Արցախը՝փակելով նաեւ Արցախ-Հայաստան սահմանագծին գտնվող Հակարիի կամուրջը: Արցախում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ բազմաթիվ աղաղակող դեպքեր են արձանագրվել. արցախցիները թշնամու կողմից թե՛ հոգեբանական թե՛ ֆիզիկական ճնշումների են ենթարկվում մշտապես: «Ժողովուրդ» օրաթերթը գրավոր հարցմամբ դիմել էր ՀՀ ՄԻՊ աշխատակազմ՝հասկանալու՝շրջափակումից ի վեր այցելել են արդյոք Արցախ կամ դիմել են Կարմիր խաչին այցը կազմակերպելու համար: ՄԻՊ աշխատակազմից մեզ տեղեկացրին, որ շրջափակումից հետո Պաշտպանի աշխատակազմից այս ընթացքում չեն այցելել Արցախ, որպեսզի տեղում հասկանան, թե ինչ խնդիրների են բախվում արցախցիները: ՄԻՊ աշխատակազմից հետաքրքրվել էինք նաեւ, թե երբ է արդյոք պատրաստվում նորընտիր ՄԻՊ Անահիտ Մանասյանն այցելել Արցախ: Մեզ աշխատակազմից տեղեկացրին, որ առաջին իսկ հնարավորության դեպքում Պաշտպանը կմեկնի Արցախ՝մարդու իրավունքների պաշտպանության իրավիճակին ծանոթանալու եւ այդ բնագավառում առկա խնդիրներն արձանագրելու նպատակով: «Այցի հնարավորության հետ կապված հարցերն այժմ գտնվում են քննարկման փուլում»,-ասվում է Պաշտպանի աշխատակազմից մեզ տրված պատասխանում: Այսպիսով, պատասխանից պարզ է դառնում, որ Անահիտ Մանասյանը համենայնդեպս առաջիկայում այց չի նախատեսում Արցախ շրջափակմամբ պայմանավորված խոչընդոտների պատճառով: Հատկանշական է, որ, օրինակ, նախկին ՄԻՊ Արման Թաթոյանի պաշտոնավարման ժամանակ ՄԻՊ-ի առջեւ փակ դռներ չկային. վերջինս ցանկացած միջոց գտնում էր, որպեսզի այցելի ադրբեջանական ագրեսիայից տուժած բնակավայրեր, տեղում արձանագրում էր, թե դրա հետեւանքով քաղաքացիներն ինչ խնդիրների են բախվել:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ 58 միլիոն 585 հազար դրամի չափով գումար է նախատեսվում սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամներին աշխատավարձ տալու համար: Խոսքը 5 անդամների՝2023 թվականի մարտ-դեկտեմբեր ամիսների աշխատավարձերի մասին է: Նկատենք, որ 2022 թվականի ընթացքում հանձնաժողովի ողջ գործունեությունը սահմանափակվեց միայն քննարկումներ ու հանդիպումներ իրականացնելու ձեւաչափերով, այսինքն՝հանգիստ ռեժիմով սահմանադրական բարեփոխումներով զբաղվող խումբը լուրջ աշխատավարձ է ստանում՝ամսական գրեթե 400.000 դրամ: Տեղեկացնենք, որ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը պետք է վարչապետի աշխատակազմ ներկայացվի մինչեւ 2023 թվականի հունիսի 30-ը: Եթե 2022թ. մարտ-դեկտեմբեր ամիսների համար հատկացվել էր 31 միլիոն 480 հազար դրամ գումար, ապա այս տարվա՝2023թ. մարտ-դեկտեմբեր ամիսների համար նախատեսվում է 58 միլիոն 585 հազար դրամ, այսինքն՝հանձնաժողովի անդամների աշխատավարձն էլ է բարձրացել:

ՎԱՏ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ Է

«ՉԵՄ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ ԱՍԱԾՆԵՐԸ. ՆԱ ԼՈՒՐՋ ՄԱՐԴ ՉԷ»

Ադրբեջանական կողմը ապրիլի 23-ից փակել է Արցախ-Հայաստան սահմանագծին գտնվող Հակարիի կամուրջը, որը գտնվում է ՌԴ խաղաղապահ զորակազմի պատասխանատվության տիրույթում՝ Լաչինի միջանցքում: Այս ճանապարհը փակելով՝ կտրվում է Հայաստանի (Կոռնիձորից) եւ Արցախի միջեւ ցամաքային կապը նաեւ Լիսագոր, Մեծ Շեն, Հին Շեն եւ Եղծահող գյուղերի հատվածում: Հակառակորդը այնտեղ նաեւ անցակետ է տեղադրել:

«Ժողովուրդ» օրաթերթը Ադրբեջանի կողմից Արցախի լիակատար շրջափակումից հետո այնտեղ ստեղծված իրավիճակի վերաբերյալ զրուցել է Ջինված ուժերի գլխավոր շտաբի նախկին պետ Մովսես Հակոբյանի հետ:

-Պարոն Հակոբյան, Ադրբեջանն ապրիլի 23-ից արդեն ամբողջական շրջափակման է ենթարկել Արցախը, փակել է Արցախ-Հայաստան սահմանագծին գտնվող Հակարի գետի կամուրջը, այնտեղ նաեւ անցակետ է տեղադրել: Ի՞նչ զարգացումներ կլինեն այս մասով առաջիկայում:

-Ես որեւէ ակնկալիքներ չունեմ, ես միայն գիտեմ՝ ինչ է կատարվում:

-Ի՞նչ է կատարվում՝ ըստ Ձեզ:

-Նոյեմբերի 9-ի փաստաթղթում գրված կետերն են իրագործվում:

-Բայց նոյեմբերի 9-ի փաստաթղթում չկա այդպիսի կետ, որ Ադրբեջանը պետք է ամբողջական շրջափակի Արցախը, արգելի հայերի մուտքն այնտեղ: Այդ փաստաթղթում գրված է, որ ռուս խաղաղապահները պետք է վերահսկեն միջանցքը եւ ապահովեն այդ տարածքով անվտանգ երթեւեկությունը:

-Այդ փաստաթղթում ուրիշ կետ էլ կա, որ պետք է կատարվի. նոյեմբերի 9-ի փաստաթղթի վերջին կետն է, նայած թե ինչ ժամանակացույցով են կողմերը շարժվում, պայմանավորվում:

-Պարոն Հակոբյան, փաստացի ստացվում է, որ Արցախն ամբողջությամբ կտրված է Հայաստանից. ադրբեջանական կողմն անգամ թույլ չի տալիս, որ սնունդ ու առաջին անհրաժեշտության իրեր մտնեն Արցախ:

-Ի՞նչ կապ ունի՝ այսօր է կտրված, թե վաղը, տարբերությունը ո՞րն է:

-Այսինքն՝ Ադրբեջանի այս քայլը սպասելի՞ էր Ձեզ համար:

-Ես արդեն հոգնել եմ բացատրել, որ նոյեմբերի 9-ի փաստաթուղթը մեզ համար շատ վատ փաստաթուղթ է. այդ փաստաթղթով ամրագրված է, որ Արցախը հանձնված է Ադրբեջանին, մնացած բոլոր գործողություններն արդեն ժամանակացույցով կատարվող գործողություններ են:

-Պարոն Հակոբյան, ԱԺ պաշտպանության հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը վերջերս աղմկահարույց մի հայտարարություն արեց՝ ասելով, որ 44-օրյա պատերազմին հաջորդած ժամանակահատվածում, երբ թշնամական կողմը կրակել է հայկական դիրքերի, բնակավայրերի ուղղությամբ եւ տարածքներ է նվաճել, պատշաճ դիմադրության չի արժանացել, զորքը չի կրակել, բայց հիմա արդեն իրավիճակ է փոխվել, ու մերոնք եւս անհրաժեշտության դեպքում կրակում են: Ի՞նչ կասեք այս մասին:

-Ես չեմ մեկնաբանում նրա ասածները. նա լուրջ մարդ չէ:

-Դուք եւս այդ ընթացքում եղել եք առաջնագծում. իսկապե՞ս չի կրակել մեր զորքը:

-Իսկ այդպիսի մարդ կա՞, ով գիտի՝ կրակել են, թե ոչ, բացի Անդրանիկ Քոչարյանից:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Միխայիլ Գալուզինը հանդիպումներ է ունեցել Հայաստանի եւ Ադրբեջանի դեսպանների հետ: Խոսքը ՌԴ-ում Ադրբեջանի դեսպան Փոլադ Բյուլբյուլօղլուի եւ ՌԴ-ում Հայաստանի դեսպան Վաղարշակ Հարությունյանի մասին է:

Ռուսական պաշտոնական գերատեսչության կողմից տարածված հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ հանդիպումների ընթացքում քննարկվել են Լաչինի միջանցքում եւ Լեռնային Ղարաբաղի շուրջ զարգացումները: ՌԴ ԱԳՆ-ից մասնավորապես հայտնում են. «Հաստատվել է հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների 2020-2022 թթ. պայմանավորվածությունների ամբողջ համալիրի անշեղ պահպանման կարեւորությունը»:

Հավելենք, որ Միխայիլ Գալուզինն ապրիլի 25-ին Երեւանում էր: Նա այդ ժամանակ հանդիպումներ է ունեցել Հայաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալներ Վահե Գեւորգյանի եւ Մնացական Սաֆարյանի հետ: Գալուզինը առանձնազրույց էր ունեցել նաեւ Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանի հետ:

ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՋՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում Ոստիկանության պարեկային ծառայության կազմում ստեղծվում է ջրային ստորաբաժանում: Նախագիծը հավանության է արժանացել կառավարության երեկվա նիստում եւ ուղարկվել Ազգային ժողով: Ջրային պարեկները կատարելու են նավավարի սթափության վիճակի զննության, լողամիջոցի զննման եւ մի շարք այլ գործառույթներ, արձագանքելու են ձկնագողության դեպքերին:

Հիմնավորման մեջ նշվում է, որ ջրային պարեկները լինելու են ունիվերսալ ծառայություն իրականացնողներ: Ջրային պարեկությունը լինելու է դասական պարեկի լրացուցիչ ֆունկցիան, այսինքն՝ մասնագիտացված պարեկների թիմում ընդգրկված պարեկները, ըստ անհրաժեշտության, պարեկություն իրականացնելու են նաեւ ցամաքային հատվածում, Գեղարքունիքի պարեկային ծառայությանը վերապահված այլ գործառույթներ:

Պարեկային ծառայության ջրային ստորաբաժանմանը վերապահվելու են մի շարք գործառույթներ: Մասնավորապես նախատեսվել են կարգավորումներ՝ ջրային փոխադրամիջոցների շահագործման պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելիս համապատասխան փաստաթղթերի ստուգման, նավավարների սթափության վիճակի զննության, լողամիջոցը վարելուց ոչ սթափ վիճակում գտնվող անձանց մեկուսացնելու, հրդեհային անվտանգության կանոնների պահպանման, ստուգման, լողամիջոցի զննման, օրենքով նախատեսված որոշ հիմքերով լողամիջոցի շահագործումն արգելելու եւ վերջին դեպքում լողամիջոցը տեղափոխելու կամ այլ անձի հանձնելու վերաբերյալ:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Բրյուսել կատարած այցի շրջանակներում ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի աշխատակազմով հանդիպեցի Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության բաժնի ղեկավար Դորոտա Դլուչի-Սուլիգայի եւ նրա աշխատակազմի հետ»,- իր ֆեյսբուքյան էջում գրել է ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը:

«Խոսեցի Հայաստանի եւ Արցախի անվտանգային խնդիրների, Ադրբեջանի կողմից միջազգային մարդասիրական իրավունքի կոպտագույն խախտումների, սահմանամերձ համայնքների բնակիչների անվտանգային մարտահրավերների մասին:

Պատմեցի, որ Սոթքի հանքավայրի 800 աշխատակիցներ զրկված են աշխատանքի գնալու հնարավորությունից, քանի որ 1 շաբաթից ավելի ազերիները կրակում են ու թույլ չեն տալիս մարդկանց գնալ իրենց աշխատանքին:

Նշեցի, որ, չնայած միջազգային հանրության բոլոր ջանքերին եւ ԵՄ դիտորդական առաքելությանը՝ հասնել խաղաղության Կովկասյան տարածաշրջանում, Ադրբեջանը շարունակում է ՀՀ ինքնիշխան տարածքների օկուպացիան, գրեթե ամեն օր կրակում է հայկական դիրքերի, ՀՀ սահմանամերձ բնակավայրերի ուղղությամբ, իրականացնում դիվերսիոն գործողություններ, որոնց հետեւանքով, ցավոք, ունենք զոհեր եւ վիրավորներ:

Խոսեցի Ադրբեջանի կողմից Արցախի լիակատար շրջափակման հետեւանքով արդեն 4 ամիս ծանրագույն պայմաններում հայտնված 120.000 Արցախի մեր հայրենակիցների խնդիրներից, որոնք զրկված են կյանքի, ազատ տեղաշարժի, իրենց առողջության, կրթության իրավունքներից, որոնք երաշխավորված են միջազգային մի շարք կոնվենցիաներով եւ փաստաթղթերով:

Ընդգծեցի, որ արցախահայության ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչումն այս իրավիճակում դարձել է հրատապ անհրաժեշտություն, որը հնարավորություն կտա փրկել շրջափակման մեջ հայտնված 120.000 մարդու կյանք:

Շնորհակալություն հայտնելով իմ նամակներին արձագանքելու համար՝ նշեցի, որ մեր այցն անհրաժեշտ խթան էր համագործակցության ընդլայնման առումով:

Տիկին Դորոտա Դլուչի-Սուլիգան իր հերթին հայտնեց իր պատրաստակամությունը՝ շարունակական համագործակցության, եւ նշեց, որ Եվրոպական խորհրդարանը Հայաստանի հետ ունի կարեւոր օրակարգ», ... գրել է նա:

ՄԻՊ-Ը ԱԶԱՏՈՒՄՆԵՐ Է ԱՆՈՒՄ

ՄԻՊ լրատվության հետ կապերի բաժնի ղեկավար Ամալյա Մարգարյանն ազատվել է աշխատանքից:

Հիշեցնենք, որ ապրիլի 12-ին 69 կողմ, 0 դեմ ձայնով՝ Անահիտ Մանասյանն ընտրվեց Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան:

Հիշեցնենք նաեւ, որ ArmLur.am-ը գրել էր՝ Մանասյանի՝ ՄԻՊ նշանակվելուց հետո ՄԻՊ աշխատակիցներն ազատման դիմումներ են գրում եւ հեռանում: Անահիտ Մանասյանն իր հավատարիմ մարդկանց է բերում ՄԻՊ գրասենյակ:

Նորընտիր ՄԻՊ Անահիտ Մանասյանի պաշտոնավարման առաջին իսկ օրն աշխատանքից ազատման դիմում է գրել ու ՄԻՊ-ից հեռացել աշխատակազմի ղեկավար Անի Մխիթարյանը, որը նշանակվել էր Քրիստինե Գրիգորյանի օրոք. ասում էին՝նրա ընկերուհին է:

Նշենք, որ Անի Մխիթարյանը մինչ ՄԻՊ աշխատակազմի գլխավոր քարտուղար դառնալը արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի խորհրդականն էր, դրանից առաջ էլ ԱՆ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության (ՔԿԱԳ) պետն էր: Նա անցնում էր հայտնի «որդեգրումների գործով»՝ որպես մեղադրյալ, եւ ապօրինի ծագում ունեցող գույքի վարույթներից մեկով:

Ի՞ՆՉ Է ՆԱԽԱՏԵՍՎԱԾ

Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ մայիսի 3-5-ը Հայաստանից պատվիրակություն կգործուղվի Պրահա: ArmLur.am-ը տեղեկացավ, որ պատվիրակությունը տնտեսական համագործակցության հարցերով հայ-չեխական միջկառավարական հանձնաժողովի 6-րդ նիստին կմասնակցի: Պատվիրակության կազմում կլինեն՝

Նարեկ Տերյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (պատվիրակության ղեկավար)

Գեւորգ Մանթաշյան - ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ

Արթուր Մարտիրոսյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ

Տիգրան Գաբրիելյան - ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

Արա Մարգարյան - ՀՀ արտաքին գործերի նախարարության Եվրոպայի վարչության պետ

Արմեն Այվազյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ

Լիլիթ Սարոյան - ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության արտաքին կապերի վարչության պետ

Արմեն Մելքոնյան - ՀՀ առողջապահության նախարարության միջազգային հարաբերությունների վարչության պետ

Աննա Հասմիկյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ

ԱՍՈՒԼԻՍ

ՖՐԱՆՍԻԱՆ ԱՋԱԿՑՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

«Ֆրանսիան իր լիակատար աջակցությունն է ցուցաբերում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բանակցություններին Եվրամիության ու Միացյալ Նահանգների գործընկերների կողմից, - երեկ Երեւանում հայաստանցի իր պաշտոնակցի հետ համատեղ ասուլիսին հայտարարեց Ֆրանսիայի արտգործնախարար Կատրին Կոլոնան:- Բոլորս գիտենք, որ խաղաղության ճանապարհը դժվարին է, դժվար է գտնել, նաեւ՝ հաճախ երկար, բայց ես ասում եմ Երեւանում, ինչպես ասել եմ Բաքվում, դա միակ ճանապարհն է, որը հնարավորություն կտա արդար եւ կայուն խաղաղության հասնել, միակ ճանապարհը, որ հնարավորություն կտա նոր հեռանկարներ ստեղծել երկու երկրների ադրբեջանի եւ երկու երկրների բնակչությունների համար: Ուստի մենք բոլորին քաջալերում ենք վճռականորեն այդ ճանապարհի վրա կանգնել, պարո՛ն նախարար, Ձեր բարեկամների օգնությամբ: Արդար եւ կայուն խաղաղություն. ի՞նչ է սա նշանակում: Նախեւառաջ՝ խաղաղություն, որը հիմնված է միջազգային իրավունքի հարգանքի վրա»:

Փարիզն անընդունելի է համարում Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքով տեղաշարժի խոչընդոտումը եւ հայտարարում, որ դա Լեռնային Ղարաբաղի բնակչության համար հղի է տնտեսական եւ մարդասիրական ճգնաժամի լուրջ վտանգներով: Ըստ Կոլոնայի՝նման գործելաոճը նաեւ խոչընդոտում է Հայաստանի հետ խաղաղ բանակցություններին. «Եվ մենք շարունակում ենք կոչ անել վերականգնել անարգել տեղաշարժը Լաչինի միջանցքով՝ համաձայն ձեր կողմից ստանձնած պարտավորությունների, բայց նաեւ՝ համաձայն Միջազգային արդարադատության դատարանի վճռի: Այդ արգելափակումը արդեն մի քանի ամիս է տեւում. դա ընդունելի չէ եւ չի համապատասխանում միջազգային իրավունքի հանձնառություններին եւ, բացի այդ, մարդասիրական ճգնաժամի ռիսկ է ստեղծում Լեռնային Ղարաբաղի բնակչության համար»:

«Լաչինի միջանցքում անցակետ տեղադրելը նոյմեբերի 9-ի հայտարարության հերթական, սակայն հետեւանքների առումով չափազանց վտանգավոր խախտում է, - իր հերթին հայտարարեց Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանը:- Դրա եւ Լեռնային Ղարաբաղը լքելուն ուղղված Ադրբեջանի իշխանությունների արդեն բացահայտ կոչերի, ատելության խոսքի հետեւում հնարավոր չէ չտեսնել Լեռնային Ղարաբաղում էթնիկ զտումների իրականացման իրական սպառնալիքը: Սա պետք է պարզ լինի նաեւ միջազգային հանրության համար, եւ այս համատեքստում եւս մեկ անգամ ընդգծել ենք միջազգային անվտանգության մանդատով օժտված ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից գործուն քայլեր ձեռնարկելու, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղ եւ Լաչինի միջանցք միջազգային առաքելություն ուղարկելու, միջազգային մարդասիրական կազմակերպությունների անարգել մուտքն ապահովելու»:

Այցից առաջ Կոլոնան հայտարարել էր, որ «ստեղծված իրավիճակը երկար շարունակվել չի կարող»՝ ընդգծելով, որ այդ փակուղին մեծացնում է լարվածությունը եւ հարվածի տակ դնում քաղաքական կարգավորման հեռանկարը:

Նա Բաքվում հանդիպել է Ադրբեջանի նախագահի, արտգործնախարարի հետ, պնդել՝ Լաչինի միջանցքը պետք է բացվի, Ադրբեջանը պետք է հարգի միջազգային իրավունքը:

Ն. Հ.

ԼՈՒՐԵՐ

ԿՏՐՈՆՆԵՐ՝ ԱՇԽԱՏԱՎԱՅՐԵՐՈՒՄ

Կտրոնային համակարգի ապրանքները ձեռք են բերվում պետության կողմից ու կազմակերպմամբ, իսկ զբաղվածություն ունեցող քաղաքացիներին ապրանքներն արդեն իրացվում են աշխատավայրերում կամ դրանց մոտակայքում:

Այս մասին տեղեկացնում է Արցախի պետնախարար Գուրգեն Ներսիսյանը:

«Ինչպես հայտարարել էինք ավելի վաղ, արդեն երրորդ օրն է, կտրոնային համակարգով նախատեսված ապրանքների զգալի մասը ձեռք է բերվում եւ մանրածախ վաճառքի կետերին իրացվում է պետության կողմից եւ կազմակերպմամբ: Այդ ոլորտում ձեւավորված մոտեցումների վերանայման արդյունքները արդեն դրական են գնահատվում մեր քաղաքացիների կողմից, բնակչությանը իրացվում է բարձր որակի ապրանք՝ ողջամիտ գներով:

Հաշվի առնելով, որ պետական եւ մասնավոր հատվածում ներգրավված մեր քաղաքացիները աշխատանքային զբաղվածության պատճառով մեծ դժվարությամբ էին կարողանում օգտվել կտրոնային համակարգով նախատեսված ապրանքներից, երեկվանից հիշյալ անձանց անհրաժեշտ մթերքներն իրացվում են աշխատավայրերում շրջիկ մեքենաների միջոցով կամ դրանց մոտ գտնվող խանութներում, որպիսի գործընթացը կրելու է շարունակական բնույթ»,- «Ֆեյսբուք»-ի իր էջում գրել է նա:

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Էդվարդ Ասրյանը բարձր է գնահատում Եվրամիության դիտորդական առաքելության աշխատանքը Հայաստանում: Էդվարդ Ասրյանն այս մասին ասել է Ջերմուկում Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Կատրին Կոլոնայի հետ հանդիպմանը:

«Միանշանակ ես բարձր եմ գնահատում Եվրամիության դիտորդական աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում: Այդ աշխատանքով Ադրբեջանի զինված ուժերը իրենց առավել զսպված են զգում: Այնպես որ, շատ լավ է ստացվում աշխատանքը Հայաստանի սահմանների երկայնքով»,- ասել է Ասրյանը:

Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարն էլ արձանագրեց, որ Հայաստանի եւ ԵՄ դիտորդական առաքելության համագործակցությունը շատ դրական է. «Մեզ համար դրական արդյունքներ է տալիս այդ աշխատանքը: Այն մեզ հնարավորություն է տալիս դիտորդական աշխատանքի շնորհիվ տեղից տեղեկություններ ստանալ, որոնք օգտակար են ԵՄ անդամ պետությունների համար: Սա դիտորդական առաքելություն է, զինված առաքելություն չէ, նպատակը պարզապես հետեւելն է իրավիճակին, սակայն, ամեն դեպքում, այդ ներկայությունը հնարավորություն է տալիս լարվածությունը թուլացնել»,- ասել է Կատրին Կոլոնան:

ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔ

Ի՞ՆՉ ԿԱՍԿԱԾՆԵՐ ՈՒՆԵՆ ՀԱՐԱՋԱՏՆԵՐԸ

ArmLur.am-ին հասած լուրերի համաձայն՝ երեկ Արտաշատի քննչականի պատուհանից ցած նետված տղամարդու հարազատները կասկածներ ունեն, որ իրենց հարազատին քննչականի շենքի պատուհանից ցած են նետել: Ըստ մեզ հասած լուրերի՝ հարազատները պնդում են, որ իրավապահները ներկայացնեն մինչ պատուհանից ցած նետվելու տեսաձայնագրությունը, ինչ են գրուցել քննչականում իրենց հարազատի հետ, եւ ինչ է կատարվել, որից հետո Միսակ Պողոսյանը գնացել է այդ բայլին:

ArmLur.am-ը հայտնել էր, որ ՀՀ քննչական կոմիտեի Արտաշատի քննչական բաժնի պատուհանից մեղադրյալը իրեն ցած էր նետել եւ մահացել: Ավելի ուշ դեպքի մասին պաշտոնապես հայտնեց կոմիտեն՝ նշելով. «2023թ. ապրիլի 27-ին մեղադրյալը ցատկել է ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության երրորդ հարկի միջանցքի լուսամուտից եւ մահացել:

ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի եւ 393-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում Արտաշատ համայնքի Հովտաշեն բնակավայրի բնակիչ Միսակ Պողոսյանին 2022 թվականի սեպտեմբերի 30-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով եւ 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, ներկայացվել է մեղադրանք՝ առանձնապես խոշոր չափերով շրջանառությունն արգելված թմրամիջոցներ պարունակող բույսեր, մասնավորապես՝ շուրջ 200 «Կանեփ» տեսակի բույս աճեցնելու, ինչպես նաեւ իրացման նպատակով առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր շուրջ 277 գրամ քաշով մի քանի տասնյակ փաթեթներով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի շրջանառության համար:

Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրված եղել բացակայելու արգելը: Ավելի ուշ օպերատիվ նոր տվյալների իրացման արդյունքում նրա ավտոմեքենայի խուզարկությամբ հայտնաբերվել է տետրահիդրոկաննաբինոլ բուսական խառնուրդ տեսակի թմրամիջոց:

Ելնելով դրանից՝ մեղադրանքը լրացվել է, նրա նկատմամբ, դատարանի որոշմամբ, որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը: Կալանքի երկամսյա ժամկետը լրանալուց հետո վարույթն իրականացնող մարմինը միջնորդություն է ներկայացրել դատարան՝ ժամկետը եւս երկու ամսով երկարացնելու վերաբերյալ, որը, սակայն, դատարանի որոշմամբ, մերժվել է, եւ անձի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Դրանից հետո պարզվել է, որ Մ. Պողոսյանը քննությամբ դեռեւս չպարզված հանգամանքներում ապօրինի ձեռք է բերել «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց, որը հայտնաբերվել եւ վերցվել է 2023թ. ապրիլի 25-ին նրա անձնական խուզարկությամբ:

Քրեական վարույթով ձեռք բերված նոր տվյալների հիման վրա՝ դատախազի որոշմամբ՝նրա նկատմամբ նոր հանրային քրեական հետապնդում է հարուցվել, ինչից հետո մեղադրանք առաջադրելու եւ դատարան ներկայացնելու նպատակով քննիչի կողմից Ոստիկանությանը հանձնարարություն է տրվել Մ. Պողոսյանին ներկայացնելու վարույթն իրականացնող մարմնին:

Ոստիկանության ծառայողները, ի կատարումն քննիչի հանձնարարության, 2023թ. ապրիլի 27-ին ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչություն են ուղեկցել Մ. Պողոսյանին: Վարչության երրորդ հարկում՝ միջանցքում, ուղեկցող ոստիկանների հետ պաշտպանին սպասելու ընթացքում Մ. Պողոսյանը, նախնական տվյալներով, փախուստի դիմելու նպատակով հանկարծակի ցատկել է շենքի 3-րդ հարկի պատուհանի տակ գտնվող սեղանի վրա եւ պատուհանից ցած նետվել: Ստացած վնասվածքներից վերջինս մահացել է:

Դեպքի առթիվ, ՀՀ քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածի 2-րդ մասի (պաշտոնեական անփութությունը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ) եւ 506-րդ հոդվածի 1-ին մասի (արգելանքի վերցված, ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմարկում պատիժ կրող անձի փախուստը կամ ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելուց խուսափելը) հատկանիշներով, նախաձեռնվել է քրեական վարույթ: Կատարվել է դեպքի վայրի, ինչպես նաեւ դիակի արտաքին զննություն, որի արդյունքում մարմնի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել: Ձեռնարկվում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ կատարվածի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության օպերատիվ հետախուզական բաժնի եւ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության աշխատակիցների կողմից Երեւան քաղաքում իրականացված հսկողական աշխատանքների արդյունքում բացահայտվել են, առանց մաքսային մարմնի գրավոր թույլտվության, մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցն այլ անձին հանձնելու մի շարք դեպքեր:

Այսպես, 2023 թվականի ապրիլի 7-ից 15-ն ընկած ժամանակահատվածում կանգնեցվել եւ ստուգվել է շուրջ 9 տասնյակից ավելի ՀՀ ներմուծված, հիմնականում վրացական պետհամարանիշերով ավտոտրանսպորտային միջոց:

Ավտոմեքենաներից 5-ը եղել է հանձնված այլ անձի, իսկ մեկ դեպքում էլ խախտված է եղել հետագա արտահանման պարտավորությունը: Նշված տրանսպորտային միջոցները տեղափոխվել են ՆԳՆ ոստիկանության հատուկ պահպանման տարածք, այնուհետեւ՝ ՊԵԿ մաքսային հսկողության գոտի:

Իրավախախտումների վերաբերյալ կազմվել են մաքսային կանոնների խախտման արձանագրություններ՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 308-րդ եւ 309-րդ հոդվածի հատկանիշներով, եւ նյութերը փոխանցվել են ՊԵԿ իրավաբանական վարչություն:

Պետական եկամուտների կոմիտեն եւս մեկ անգամ իրազեկում է, որ, ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 264-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները Միության մաքսային տարածքում պետք է գտնվեն հայտարարատուի փաստացի տիրապետման եւ օգտագործման տակ, եթե այլ բան սահմանված չէ սույն հոդվածով: Ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները կարող են հայտարարատուի կողմից փոխանցվել այն անձին, որին սեփականության իրավունքով պատկանում է տրանսպորտային միջոցը, ինչպես նաեւ առանց մաքսային մարմնի թույլտվության եւ առանց մաքսային հայտարարագրի թույլատրվում է անդամ պետության ֆիզիկական անձի կողմից ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը փոխանցել նրա ծնողներին, երեխաներին, ամուսնուն կամ կնոջը: Նշված արարքների խախտումը նախատեսում է վարչական պատասխանատվություն՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 308-րդ հոդվածի համաձայն, մաքսային արժեքի 20 տոկոսի չափով:

ԼՈՒՐԵՐ

ԲԺՇԿԻՑ ԳՈՒՄԱՐԻ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ եւս մեկ հայցադիմում ապրիլի 17-ին ընդունվել է Հակակոռուպցիոն դատարանի վարույթ:

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ ՀՀ քաղաքացի, ակնաբույժ Ա.Ս.-ից եւ վերջինիս փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձելու 4 անշարժ գույք Երեւան քաղաքում, 8 շարժական գույք, իսկ անհնարինության դեպքում՝դրանց միջին շուկայական արժեքները, որն ընդհանուր կազմում է ավելի քան 606 մլն 102 հազար 500 դրամ,

9 մլն 912 հազար 752 դրամ գումար՝որպես ապօրինի եկամուտների եւ միջոցների մնացորդ,

386 մլն 919 հազար 865 դրամի չափով գումար, որը 1996-2022 թվականների ընթացքում չի հիմնավորվել անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում, փոխանցվել է բարեխիղճ ձեռքբերողի, կամ հնարավոր չէ նույնականացնել եւ բռնագանձել:

ԿԵՂԾ ԱԴՐԲԵՋԱՆՅԻ

Տավուշի մարզում ապրիլի 28-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել. ժամը 06:15-ի սահմաններում Տավուշի մարզի գյուղերից մեկի բնակիչ 55-ամյա կինը ահազանգել է ոստիկանության Նոյեմբերյանի բաժին եւ հայտնել, որ անհայտ անձը գաղտնի մտել է իր տուն, իր հետ հայերեն խոսելով՝ասել, որ ինքը թուրք է:

Տանտիրուհին ոստիկաններին հայտնել է, որ ժամը 04:00-ի սահմաններում անծանոթ տղամարդը մտել է իր տուն, իր կամքին հակառակ սեռական հարաբերություններ է ունեցել իր հետ, ապա ձեռքերով հարվածել իր մարմնի տարբեր մասերին եւ իրենից գողացել 1-ական ոսկյա եւ արծաթյա մատանիներ, 1 զույգ ոսկյա ականջօղեր, ապա հայերեն ասել, որ ինքը հայ չէ, ադրբեջանցի է, եւ որ կատարվածի մասին պետք է լռի ու աղմուկ չբարձրացնի, ապա դիմել է փախուստի:

Իրավապահները տաք հետքերով, նշված հանցագործություն կատարելու կասկածանքով, հայտնաբերել ու ոստիկանության Նոյեմբերյանի բաժին են տեղափոխել Տավուշի մարզի բնակիչ 28-ամյա Արտյոմ Ղ.-ին:

Վերջինս փաստերի ճնշման տակ ոչ միայն խոստովանել է իր կողմից կատարված արարքը, այլեւ նրա մոտ հայտնաբերվել են տուժողից գողացված զարդերը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ապրիլի 27-ից 28-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 68 դեպք, որոնցից 2-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԿԿԱՌՈՒՑՎԻ 5 ՇԵՆՔ

Տավուշի մարզի հանրակրթական շատ դպրոցների շենքեր կառուցվել են խորհրդային իշխանության տարիներին. դրանք բարոյապես եւ ֆիզիկապես մաշված են: Հատկապես վատ վիճակում են գտնվում Ադրբեջանին սահմանակից բնակավայրերի եւ մարզի փոքր գյուղերի հանրակրթական դպրոցների շենքերը: Օրինակ՝ արդեն 3 տարի է, ինչ Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Բարեկամավան գյուղի միջնակարգ դպրոցի շենքի տանիքի մի մասը բաց է, անձրեւաջրերը լցվում են շինության ներս՝ վնասելով պատերը: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝ նրան հարցնելով, թե Տավուշի մարզի հանրակրթական 76 դպրոցների շենքերից քանիսը հիմնանորոգման, քանիսը նորոգման կարիք ունեն: Մարզպետարանից պատասխանել են, որ մարզի հանրակրթական 10 դպրոցների շենքեր ունեն հիմնանորոգման, 32-ը՝ վերանորոգման (դասասենյակներ, միջանցքներ, մարզադահլիճներ) կարիք: Տավուշի մարզպետարանից հայտնում են, որ ապրիլի 26-ին մարզպետ Հայկ Ղալումյանը հանդիպել է մարզի շինարարական կազմակերպությունների ղեկավարների հետ, որի ընթացքում քննարկվել են «300 դպրոց եւ 500 մանկապարտեզ» պետական ծրագրով Տավուշի մարզում դպրոցների եւ մանկապարտեզների շենքերի շինարարությանն առնչվող հարցեր: 2023-2024 թվականների ընթացքում Տավուշի մարզում կկառուցվի հանրակրթական դպրոցների 5 շենք: Այդ հանդիպման ժամանակ քննարկվել են նաեւ մարզի շինարարական կազմակերպությունների կողմից շինարարական մրցույթների ժամանակ գրավի ապահովման հնարավորությունները ու «300 դպրոց եւ 500 մանկապարտեզ» ծրագրի մանրամասները:

ԹԱՓԱՌՈՂ ՇՆԵՐ՝ ԻՋԵՎԱՆՈՒՄ

Տավուշի մարզում չլուծված է թափառող, անտեր շների վնասազերծման հարցը: Նախկին տարիներին հարցը լուծվում էր որսորդական միությունների անդամների կողմից անտեր, թափառող շներին գիշերային ժամերին հրազենով ոչնչացնելու միջոցով: Այդ նպատակով համայնքների բյուջեներից գումարներ էին հատկացվում, համայնքապետարանները բնակչությանը նախապես զգուշացնում էին նախատեսված գործողության մասին՝ խնդրելով չանհանգստանալ գիշերը հնչող կրակոցներից: 2018 թվականի իշխանափոխությունից հետո Հայաստանի համայնքներում այլեւս թափառող, անտեր շներին հրազենով չեն ոչնչացնում: Ապրիլի 10-ին Բերդ քաղաքում ցերեկով թափառող, անտեր շունը հարձակվել է մի կնոջ վրա, կծել նրան: Երկու տարի առաջ Դիլիջան քաղաքում անտեր, թափառող շները բազում տեղերից կծել էին փոքրիկ մի տղայի: Վերջերս Իջեւան քաղաքի կենտրոնում անտեր շները հարձակվել են տեղացի կուսակցական գործչի, նաեւ համայնքի ավագանու անդամի վրա: Իջեւանի բնակիչները հայտնեցին, որ քաղաքի կենտրոնում՝ «Հայբիզնեսբանկի» Իջեւանի մասնաճյուղի շենքի կողքին, մշտապես գտնվում է անտեր, ագրեսիվ, սեւ մեծ շուն, որի ահարկու տեսքից եւ ագրեսիվ վարքից ահաբեկվում են բանկ այցելողները, քաղաքի կենտրոնի այդ հատվածով անցնողները:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՀԱՏԿԱՑՎԵԼ ԵՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ

ՀՀ ԿԳՄՍՆ հասարակայնության հետ կապերի եւ տեսչական վարչությունից ArmLur.am-ին հայտնում են, որ, ՀՀ կառավարության որոշմամբ, ԿԳՄՍ նախարարությանը 2023 թվականի պետական բյուջեով կապիտալ ծրագրերին հատկացված միջոցների միջեւ կատարվել է վերաբաշխում 95 մլն 276 հազար դրամ գումարի շրջանակում, ինչպես նաեւ նախարարության բյուջեն ավելացվել է 16 մլն 145 հազար դրամով:



Վերաբաշխումը կատարվել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող «Ներառական կրթության համակարգի ներդրում» դրամաշնորհային ծրագրի շրջանակում կատարված շինարարական աշխատանքների դիմաց վճարումների կատարման եւ ծրագրում ընդգրկված ուսումնական հաստատությունները համապատասխան գույքով ապահովման նպատակով: Գումար կհատկացվի նաեւ Վանաձորի գյուղատնտեսական քոլեջի շենքի վերակառուցման ավարտական աշխատանքների, ինչպես նաեւ կապիտալ ծրագրերի շրջանակում այլ օբյեկտների մասով ընդունված կատարողական ակտերի դիմաց վճարումների կատարման նպատակով:

2016թ.-ից ՀՀ ԿԳՄՍ նախարարությունն իրականացնում է «Ներառական կրթության համակարգի ներդրում» դրամաշնորհային ծրագիրը՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ: Ծրագրի շրջանակում 2019-2020 թթ.-ին իրականացվել են ՀՀ Սյունիքի մարզում ընտրված 9 դպրոցի եւ 1 տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի շենքային պայմանների՝ ներառական կրթությանը հարմարեցման աշխատանքներ: 2022 թ.-ին նշյալ աշխատանքներ իրականացվել են ՀՀ Լոռու մարզի 14 դպրոցի եւ 1 ՏՄԱԿ-ի, ինչպես նաեւ ՀՀ Շիրակի մարզի 4 դպրոցի եւ 1 ՏՄԱԿ-ի համար: ՀՀ Լոռու մարզի 8 դպրոցում եւ Շիրակի մարզի դպրոցներում աշխատանքներն ավարտվել են 2023 թ.-ին: ԱՄՆ ՄԶԳ ծրագրի շրջանակում նորոգված (շենքային պայմանները՝ ներառական կրթությանը հարմարեցված) դպրոցներն ապահովվել են համապատասխան գույքով (սեղաններ եւ գրապահարաններ): Կարեւորելով նորոգված հաստատությունների համար անհրաժեշտ գույքով ապահովումը՝ Սյունիքի, Լոռու եւ Շիրակի մարզերի հաստատությունների համար դեռեւս չգնված գույքը (աթոռներ) ձեռք կբերվի ՀՀ 2023թ.-ի պետական բյուջեի հաշվին:

Որոշմամբ գումար է հատկացվել նաեւ Վանաձորի գյուղատնտեսական քոլեջի շենքի վերակառուցման աշխատանքներն ավարտի հասցնելու համար: Քոլեջի վերակառուցումը մեկնարկել է 2017թ.-ին եւ ներկայում ավարտական փուլում է: Քոլեջի վերակառուցման աշխատանքների ամբողջական արժեքը կազմում է 1 մլրդ 361 մլն 781 հազար դրամ: Հարկ է նշել, որ քոլեջի՝ ամբողջությամբ նոր գույքով եւ լաբորատոր սարքավորումներով ապահովելու համար վերջինիս գումար է հատկացվել ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2043-Ն որոշմամբ: Գույքի եւ սարքավորումների գնման գործընթացը եւ մատակարարումը նախատեսված են այս տարի:

Որոշմամբ գումար է հատկացվել նաեւ Ռյա Թազայի միջնակարգ դպրոցի ջեռուցման աշխատանքների ամբողջացման համար՝ 942.1 հազար դրամի շրջանակում:

Որոշմամբ կատարվել են նաեւ այլ հատկացումներ, մասնավորապես՝ Երեւանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի մարզադահլիճների վերակառուցման կապալային աշխատանքների համար՝ 5,315.9 հազար դրամ, Լեռնահովիտի հիմնական դպրոցի եւ Ջիլի միջնակարգ դպրոցի մոդուլային տիպի շենքերի կառուցման հեղինակային հսկողության ծառայությունների համար՝ 1,050.8 հազար դրամ, Հագվու հիմնական դպրոցի եւ Մեղովկայի միջնակարգ դպրոցի մոդուլային տիպի շենքերի կառուցման տեխնիկական հսկողության ծառայությունների համար՝ 11,528.5 հազար դրամ, Գագարինի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի կառուցման տեխնիկական հսկողության ծառայությունների համար՝ 1,080.0 հազար դրամ, Վանաձորի թիվ 9 հիմնական դպրոցի մարզադահլիճի կառուցման տեխնիկական հսկողության ծառայությունների համար՝ 850.2 հազար դրամ:

ՊԱՐՔԱԲԱՆՈՒՄ

ԻՆՔՆԱԹԻՌԸ ԳՆՎԵԼ Է 7 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄՈՎ

Երեւան-Կապան-Երեւան չվերթ կատարած ինքնաթիռը ձեռք է բերվել «Զանգեզուր պղնձամոլիբդենային կոմբինատ» ընկերության միջոցներով մոտավորապես 7 մլրդ դրամով: Այս մասին ArmLur.am-ը տեղեկանում է «Զանգեզուր պղնձամոլիբդենային կոմբինատ» ընկերության մամուլի ծառայությունից, որը պարզաբանել է ապրիլի 26-ին իրականացված Երեւան-Կապան առաջին փորձնական չվերթի հետ կապված որոշ հարցեր:

«Չվերթն իրականացվել է «Նովեյր» ավիաընկերության կողմից L410 չեխական արտադրության ինքնաթիռով, որը պատկանում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամին: «Սյունիք» օդանավակայանի շինարարությունը, գույքի եւ ինքնաթիռի ձեռք բերումը, պահպանման ծախսերն իրականացվել են եւ այժմ իրականացվում են Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի միջոցներով»,- ասված է հաղորդագրությունում:

Կապանի օդանավակայանի, թռիչքուղու եւ այլ ենթակառուցվածքների կառուցման համար կոմբինատը ծախսել է 2,5 միլիարդ դրամ, գույքի ձեռք բերման, վերապատրաստման եւ օդանավակայանի այլ ծախսերի համար՝ 300 միլիոն դրամ:

ԶՊՄԿ ընկերությունից նշել են, որ, ընդհանուր առմամբ, օդանավակայանի շինարարության, գույքի եւ ինքնաթիռի ձեռք բերման համար ներդրվել է ավելի քան 10 միլիարդ դրամ՝ բացառապես իրենց տրամադրված միջոցներով:

Հիշեցնենք, որ ապրիլի 26-ին առաջին անգամ «Զվարթնոց» օդանավակայանից դեպի «Սյունիք» օդանավակայան իրականացվեց փորձնական չվերթ: ՀՀ կառավարությունը խնդիր է դրել ապահովել Երեւանից-Կապան կանոնավոր չվերթների իրականացումը:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 8 ճՏՊ. 1 մարդ զոհվել է, 9-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՋՎԱԴԵՊ ԾՆՈՒՆԴ

Պակիստանում տղան ծնվել է երկու առնանդամով, որը բժշկության մեջ կոչվում է դիֆալիա, եւ առանց անուսի: Հաղորդվում է, որ վեց միլիոն նորածիններից մեկը տառապում է նման հազվագյուտ անոմալ հիվանդությամբ:

Ծննդաբերությունից հետո տղային տեղափոխել են հիվանդանոց, որտեղ բժիշկները մի քանի հետազոտություն են անցկացրել:

Փոքրիկին վիրահատել են, որի ժամանակ բժիշկները նրա համար կոլոնոսկոպիայի միջոցով դեֆեկացիայի համար անցք են ստեղծել:

Զարմացած բժիշկները պատմել են, որ տղայի երկու անդամները «նորմալ վիճակում են, երկուսն էլ կարող են միզել, բայց մեկը մյուսից երկար է»: Բժիշկները կարծում են, որ երեխան կկարողանա օգտագործել երկուսն էլ, ուստի նրանք չեն վիրահատել մարմնի այս մասը:

Վիրահատությունը հաջող է անցել: Երեխան դուրս է գրվել հիվանդանոցից կոլոստոմիայի ստեղծումից երկու օր վերականգնվելուց հետո:

Մարդկության պատմության մեջ, սկսած 1609 թվականից, գրանցվել է դիֆալիայի ընդամենը 100 դեպք: 36 շաբաթականից հետո ծնված տղան հազվագյուտ հիվանդության վերջին օրինակներից մեկն է, որը նրան թողել է երկու «ճիշտ ձեւավորված ֆալուսով»:

Հաղորդվում է, որ նրա ծնողները ընտանեկան պատմության մեջ որեւէ բնածին արատ չեն ունեցել:

Բժիշկներն ասում են, որ հայտնի չէ, թե ինչպես է առաջանում դիֆալիան, եւ հայտնի ռիսկի գործոն չկա: Ընդհանուր առմամբ, ենթադրվում է, որ դա պատահաբար տեղի է ունենում սաղմի սեռական օրգանների զարգացման վաղ փուլում:

Դիֆալիա ունեցող երեխաները ենթարկվում են կյանքի բազմաթիվ ռիսկերի՝ միզասեռական համակարգի անոմալիաների պատճառով, բայց եթե նրանց համար ամեն ինչ լավ է ընթանում, ապա, ինչպես ասում են, երկու աշխատող առնանդամ ունեցող մեծահասակ տղամարդիկ կարող են կրկնակի սերմնաժայթքում ունենալ:

ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝ ՄԱՅԻՍԻ 5

Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ 2023 թվականի ապրիլի 5-ից մեկնարկել է մաքսային ծառայողի պատրաստման դասընթացի ընդունելությունը:

Դասընթացը հաջողությամբ ավարտած մասնակիցները կստանան հավաստագիր եւ աշխատելու հնարավորություն Մաքսային ծառայության տարբեր պաշտոններում:

Դասընթացի ընդունելությանը կարող են մասնակցել հայերենին տիրապետող, 18 տարին լրացած, բարձրագույն կրթություն ունեցող ՀՀ քաղաքացիները:

Դասընթացին կարող են դիմել նաեւ ավարտական կուրսի ուսանողները, որոնք աշխատանքի առաջարկ կստանան դիպլոմ ձեռք բերելուց հետո:

Դիմելու վերջնաժամկետը՝ մայիսի 5-ն է:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» Գ

ԸՆԴԼԱՅՆԵԼՈՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Յունիբանկ»-ը դարձել է Ֆրանսիա-Հայաստան առեւտրաարդյունաբերական պալատի (Ֆրանսիա-Հայաստան ԱԱՊ) անդամ: Այն հնարավորություն կտա բանկին իր մասնակցությունն ունենալ Ֆրանսիա-Հայաստան ԱԱՊ-ի անդամների միջեւ գործարար կապերի ամրապնդմանն ու զարգացմանը: Համագործակցության շրջանակում «Յունիբանկ»-ը մտադիր է իրականացնել նոր նախագծեր՝ ընդլայնելով հարաբերությունները ֆրանսահայ գործարար համայնքի եւ Հայաստանում ֆրանսիական ընկերությունների հետ:

Այս տարի «Յունիբանկ»-ի վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը եւ խորհրդի անդամ Ֆիլիպ Դելմոտը Փարիզում մասնակցեցին Ֆրանսիա-Հայաստան առաջին տնտեսական գագաթնաժողովին, որն ուղղված էր երկու երկրների միջեւ տնտեսական հարաբերությունների ներուժի զարգացմանը, բարձր տեխնոլոգիական եւ կայուն ու առանց ածխածնի տնտեսությանը:

Ֆրանսիա-Հայաստան առեւտրաարդյունաբերական պալատի գործունեությունը խթանում է Հայաստանում ֆրանսիական ընկերությունների հիմնումը, ինչպես նաեւ աջակցում ֆրանսիական եւ հայկական ընկերություններին՝ տրամադրելով նրանց առեւտրային ծառայություններ եւ անհրաժեշտ խորհրդատվություն:

«Յունիբանկ»-ն իր գործունեությունը սկսել է 2001թ.-ին: «Յունիբանկ»-ի զարգացման հիմնական ուղղություններն են մանրածախ բիզնեսը, ՓՄՁ-ներին աջակցությունը, private banking-ը եւ միջազգային հաշվարկները: Բանկն ունի 54 մասնաճյուղ եւ 100-ից ավելի պրոմո կետ: «Յունիբանկ»-ի ծառայություններից օգտվում է Հայաստանի աշխատունակ բնակչության գրեթե մեկ երրորդը:

«Յունիբանկ»-ն առաջինը Հայաստանում անցկացրեց IPO եւ տեղաբաշխեց իր արժեթղթերը բորսայում: 2022թ.-ին «Յունիբանկ»-ը ճանաչվեց բաժնետոմսերի լավագույն տեղաբաշխող Բորսայի կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման համակարգով:

Բանկն ակտիվորեն օգտագործում է ֆինանսական տեխնոլոգիաներն ու նորամուծությունները ժամանակակից սպասարկում ապահովելու համար: Լինելով մանրածախ շուկայի առաջատարներից մեկը՝ «Յունիբանկ»-ը գործարկել է արհեստական բանականության վրա հիմնված վարկային սքորինգ: Բանկի հաճախորդների համար արդեն հասանելի են Apple Pay եւ Google Pay անհպում վճարումները: 2022թ.-ի արդյունքներով՝ Visa-ն «Յունիբանկ»-ին շնորհել է Strong partnership in driving cashless մրցանակը:

Դեկարբոնացման նպատակով կանաչ էներգիային անցումը «Յունիբանկ»-ի զարգացման ռազմավարության հիմնական բաղադրիչներից մեկն է: «Յունիբանկ»-ի տվյալների մշակման կենտրոնն այժմ ամբողջությամբ սնուցվում է արեւային էներգիայով:

ESG Sustainalytics ոլորտում առաջատար վերլուծական ընկերության փորձագետները ներկայացրել են երկրորդ կողմի կարծիքը «Յունիբանկ»-ի «կանաչ» պարտատոմսերի թողարկման հայեցակարգի վերաբերյալ եւ հաստատել դրա համապատասխանությունը միջազգային չափանիշներին եւ Green Bonds Principles 2021-ի պահանջներին:

«Յունիբանկ»-ի private banking-ը՝ «Յունիբանկ Պրիվե»-ն, ճանաչվել է լավագույնը Հայաստանում՝ ըստ Euromoney Global Private Banking Awards 2023-ի:

Moody's Investors Service միջազգային գործակալությունը «Յունիբանկ»-ին շնորհել է B2 վարկանիշը՝ «կայուն» կանխատեսմամբ:

ԹԱՅՎԱՆ

ՆԿԱՏՎԵԼ Է ՉԻՆԱՍՏԱՆԻ ՌԾՈՒ 38 ԹՌՉՈՂ ՍԱՐՔ

Թայվանը վերջին մեկ օրում կղզու մոտ գրանցել է Չինաստանի ժողովրդապատգարական բանակի 38 թռչող սարք եւ 6 նավ: Այս մասին նշվել է կղզու պաշտպանության նախարարության հաղորդագրությունում:

«Այսօր՝ ժամը 06.00-ի դրությամբ, Թայվանի շուրջ հայտնաբերվել են Չինաստանի բանակի 38 թռչող սարք եւ 6 նավ»,- նշվել է հայտարարությունում: 19 թռչող սարք մտել է Թայվանի ՀՕՊ ճանաչման գոտի հարավարեւմտյան, հարավարեւելյան եւ հյուսիսարեւելյան մասերից, ինչպես նաեւ հատել է Թայվանի նեղուցի, այսպես կոչված, Միջին գիծը: Դրանց թվում են Սու-30, J-10, J-16 կործանիչները, TB-001 ռազմական անօդաչուն, BZK-005 տեսակի հետախուզական անօդաչուն, ինչպես նաեւ Y-8 ռադիոլոկացիոն հետախուզության ինքնաթիռը: Թայվանի զինվորականներն ի պատասխան օդ են բարձրացրել պարեկ, ռադիոնախազգուշացումներ են արել եւ պատրաստ վիճակի բերել զենիթահրթիռային համալիրները:

Չինաստանի բանակը ապրիլի 80-10-ին զորավարժություններ է անցկացրել Թայվանի նեղուցում, ինչպես նաեւ կղզուց հյուսիս, հարավ եւ արեւելք ընկած ջրավազանում: Դրանք անցել են «Միավորված սրածայր թուր» անվանմամբ, զուգահեռ կատարվել է պարեկում Թայվանի շուրջ:

Զորավարժությունները Թայվանի վարչակազմի ղեկավար Ցայ Ինվենի՝ «տարանցմամբ» ԱՄՆ այցելության պատասխանն էին: ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի խոսնակ Քեւին Մակքարտին ապրիլի 5-ին հանդիպում է ունեցել նրա հետ: Ամերիկյան կողմը հայտարարել է Թայվանին զենք վաճառելու շարունակման անհրաժեշտության մասին: Չինաստանի ԱԳՆ-ն այս առնչությամբ բողոք է հայտնել՝ հայտարարելով, որ Պեկինն արդյունավետ եւ վճռական պատասխան միջոցներ կձեռնարկի:

Չինաստանի բանակը մշտապես Թայվանի շրջան է ուղարկում իր նավերն ու ինքնաթիռները՝նեղուցի երկու ափերի միջեւ լարվածության սրման ֆոնին: Լարվածությունն առաջացել է անցած տարվա օգոստոսի 2-3-ին ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի այն ժամանակվա խոսնակ Նենսի Փելոսիի՝ Թայբեյ կատարած այցից հետո: Դրանից հետո Թայվան են այցելել ամերիկացի օրենսդիրների եւ նահանգապետերի էլի մի քանի պատվիրակություններ: Չինաստանում կարծում են, որ այդ այցելությունները սադրանք են, միջամտություն Չինաստանի ներքին գործերին եւ աջակցություն՝թայվանցի անջատողականներին:

Չինական ամենամեծ Թայվան կղզին ունի սեփական վարչակազմ 1949թ.-ից, բայց Պեկինում այն համարում են միասնական երկրի անքակտելի մասը: Վաշինգտոնը Թայբեյի համար սպառազինության եւ ռազմական տեխնիկայի գլխավոր մատակարարն է մնում:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԲԱՑԱՌԻԿ ԱՂԲՅՈՒՐ

Newmag-Ը՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՑԵՂԱՍՊԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Newmag-ն իր գործունեության 5 տարիների ընթացքում հրատարակել է գրքեր, որոնք ցույց են տալիս ադրբեջանական կառվարության ցեղասպան քաղաքականությունը: Հրատարակչության գրքերը նաեւ փաստավավերագրություններ են՝ ինչու է աշխարհը կողմնակալ ու կրավորական վերաբերմունք ցուցաբերում եղեռն ու վայրագություններ իրականացնող երկրի հանդեպ: 7 գիրք՝ թուրք-ադրբեջանական խայտառակ արարքների, սպանության հրամանների, էթնիկ ոճիրի մասին:

Նիլ Ֆերգյուսոնի «Հրապարակն ու Աշտարակը» մարդկության կենսագրության ցնցող ու անտեսված մանրամասներով անդրադառնում է նաեւ Հայոց ցեղասպանության մեջ գերմանական մեղքին: Գերմանացիները փորձում էին առաջ մղել պանիսլամիզմը, սկսել կրոնական ապստամբություն: Ֆերգյուսոնը բացատրում է, թե իրականում ինչ էին փորձում անել գերմանացիները, ինչու էին ձախողվել նրանց ծրագրերը, ինչպես բրիտանացիները ցանցային պատերազմում հաղթեցին գերմանացիներին, եւ թե ինչպես հայերը դարձան եվրոպական տերությունների հենց ցանցային առճակատման զոհը՝ կորցնելով բնակչության ու հայրենիքի մեծ մասը:

Թուրքիայի եւ Ադրբեջանի իրականացրած ցեղասպան քաղաքականությունը անցել է գրող, իրավաբան Աննա Աստվածատուրյան Թերքոտի սերունդներով: Գրողի պապը 1915 թվականին փրկվել է թուրքական յաթաղանից: 75 տարի անց նրա ընտանիքը կրկին փորձում էր փրկվել այդ յաթաղանից արդեն Բաքվում: Իր լսածն ու տեսածը 8-ամյա աղջնակը տատիկի խորհրդով գրի է առնում օրագրում, տարիներ անց մի ընտանիքի պատմությունը դառնում է «Արտաքսում՝ դեպի անհայտություն» կոչվող գրքի սյուժե ու հրատարակվում անգլերեն, ռուսերեն, հայերեն լեզուներով: Այժմ Աննան Միացյալ Նահանգներում հայտնի իրավապաշտպան է, որն ադրբեջանական վայրագությունների մասին կարդում է նաեւ դասախոսություններ, կազմակերպում իրազեկման միջոցառումներ:

Newmag-ի մյուս գրող Մագդա Թախտաճյանն իր բոլոր գրքերում կարմիր գծով անցկացնում է Հայոց ցեղասպանության թեման: Հայերեն հրատարակված «Ռոջավան»-ը գրելիս մտքում ունեցել է ցեղասպանությունից փրկված իր տատիկներին, որոնք զինված պայքարի որեւէ շանս չեն ունեցել եւ փրկվել են միայն երջանիկ պատահականությամբ: Արդարության որոնում, ճշմարտության համար կռիվ եւ հիշողության պահպանում. հենց այս երեք նախապայմաններով էլ շարադրում է իր գրական գործերը, որոնք յուրօրինակ պայքար են՝ հանուն արժանապատիվ կյանքի ու երջանկության:

1915-ի ջարդերի մասին Newmag-ը հայերեն թարգմանել ու հրատարակել է ֆրանսիացի գրող Վալերի Մանտոյի «Ակոս» գիրքը: Գրքի գլխավոր հերոսը Հրանտ Դինքն է, ում միջոցով գրողը ցույց է տալիս Թուրքիայի անցյալի ու ներկայի քաղաքականությունը, որ չի փոխվել: Գիրքը ոչ միայն արձանագրում է Դինքի պայքարը, այլեւ այն բոլոր լրագրողների, որոնք այսօր էլ ցանկանում են բարձրաձայնել Թուրքիայում տեղի ունեցող իրականությունն ու հայտնվում են բանտերում: Վալերի Մանտոյի վեպում անդունդի եզրին գտնվող աշխարհն է ու սպանված լրագրողի կյանքը:

Հայոց ցեղասպանության մեջ Թուրքիայի հանցավորության հիմնաքարային գնահատականն առաջիններից տվեց թուրք պատմաբան Թաներ Աքչամը: Պատմաբանն իր ծավալուն ուսումնասիրություններից հետո ներկայացնում է մանրակրկիտ մշակված, օսմանյան եւ այլ աղբյուրների առատությամբ աչքի ընկնող «Խայտառակ արարք» աշխատությունը, որը նաեւ թուրքական իշխանություններին ուղղված մեղադրանք է:

Իր մյուս՝ «Սպանության հրամաններ» գիրքը գրելով՝ Աքչամի հիմնական նպատակը եղել է ուսումնասիրել ու ներկայացնել այն փաստաթղթերը, որոնք մինչեւ այդ ոչ ոք չէր տեսել եւ չէր ուսումնասիրել: Պատմաբանի խոսքով՝ նրանք հիմնականում պնդում են, թե 1915թ.-ին տեղի ունեցածը ապացուցող փաստաթղթեր չկան, սակայն իր աշխատություններում տեղ են գտել նույն այդ բացառիկ աղբյուրներն ու հետազոտությունները:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՔԱՐԴԱՇՅԱՆ ՔՈՒՅՐԵՐԻ ՎԵՃԸ

The Kardashians սերիալի երրորդ սեզոնի Hulu-ի նոր թիզեր-թրեյլերն անդրադառնում է Քորթնի եւ Քիմ քույրերի վեճին:

Քորթնին Քիմին մեղադրել է 2022 թվականի մայիսին իր եւ Թրեւիս Բարքերի հարսանիքը որպես «գործնական հնարավորություն» օգտագործելու համար՝ նշելով, որ իրեն «զրկել են» հատուկ օրվանից:

Քորթնիի եւ Թրեւիսի շքեղ հարսանիքը կայացել է իտալական կալվածքում, որը պատկանում է Dolce & Gabbana-ի դիզայներներ Դոմենիկո Դոլչեին եւ Ստեֆանո Գաբանային, որոնք ստեղծել են զույգի հարսանյաց զգեստները:

Հարսանիքից անմիջապես հետո Քորթնին իմացել է, որ Քիմը Dolce & Gabbana-ի հետ մշակում է Chao, Kim անունով հավաքածուն: 2023 թվականի գարուն/ամառ եւ նկարագրված որպես 90-ականների ու 2000-ականների բրենդի խորհրդանշական արխիվների «վերապատկերում» համագործակցությունը դեբյուտ է ունեցել սեպտեմբերին Փարիզի Նորաձեւության շաբաթում:

Քիմը ներկա է գտնվել ցուցադրությանը եւ Դոմենիկոյի ու Ստեֆանոյի հետ քայլել է պոդիումով այն բանից հետո, երբ մոդելներն ավարտել են իրենց ելույթը: Հավաքածուի հետ մեկտեղ Kim-ը եւ D&G-ն թողարկել են սահմանափակ հավաքածու: Այն ներառում էր 195 դոլար արժողությամբ վերնաշապիկ, որի վրա պատկերված էր Քիմը՝ մակարոն ուտելիս:

Թեեւ պարզ չէ, թե որքան է Քիմի ազդեցությունը ապրանքանիշի վրա, Launchmetrics-ը հայտնում է, որ D&G-ի մասնակցությունը Քորթնիի հարսանիքին դրական ազդեցություն է ունեցել նրանց մեդիա հրապարակման վրա: Քորթնիի հարսանիքից ընդամենը օրեր անց պարզվել է, որ իտալական նորաձեւության տունը մամուլում հրապարակումների շնորհիվ վաստակել է ավելի քան 47 միլիոն դոլար:

Եվ հիմա՝ նրանց հարսանիքից գրեթե մեկ տարի եւ Քիմի հավաքածուի դեբյուտից յոթ ամիս անց, քույրերի դրաման ամբողջությամբ կբացահայտվի Hulu-ի The Kardashians-ում:

«Քույրս օգտագործեց իմ հարսանիքը որպես բիզնես հնարավորություն», - ասում է Քորթնին խոստովանության մեջ՝ ակնարկելով, որ Քիմը հարսանիքը դիտում է որպես D&G ընկերություն մտնելու միջոց: Քորթնին եւ Քիմի մյուս քույրերը բամբասում են զույգի միջեւ ծագող լարվածության մասին ու խոստովանում են, որ վստահ չեն, թե արդյոք իրենց հարաբերությունները կարող են շտկվել:

Քիմը նախ Քլոեից իմանում է, որ Քորթնին «կատաղած է», բայց կարծում է, որ ավագ քույրն այդ ամենը սխալ է հասկացել: «Ես իսկապես շփոթված եմ, թե ինչպես է դա նրա մտքով անցել»:

Քիմը նաեւ պնդել է, որ իր D&G հավաքածուն ստեղծելիս հոգացել է, որ այն որեւէ կերպ չազդի Քորթնիի հարսանիքի վրա, սակայն Քորթնին չի համոզվել:

ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

«ԵՍ ԼԻՔԸ ԼԱՑԵԼ ԵՄ, ԲԱՅՑ ՉԵՄ ՓՈՇՄԱՆԵԼ»

Դերասանուհի Լիանա Վանոյանն «Ինստագրամ»-ի իր բլոգի «Սթորի» բաժնում իր հետեւորդներին պատմել է ստամոքսի երկայնակի մասնահատման պատճառների, հետեւանքների մասին:

● *Ապրիլի 30-ին «Հայ-Արտ» մշակութային կենտրոնում տեղի կունենա «Վան Գոգ եւ Բենքսի» ցուցահանդեսը: Տոմսերի արժեքը՝3000-3500 դրամ: Սկիզբը՝ամեն օր՝ժամը 10:00-ից 21:00-ն:*

ԵՂԵ՞Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե երբ է մերժվում կենսաթոշակ նշանակելը:

Անիտա Առաքելյան (62 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ա. Առաքելյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին որոշում կայացվում է, եթե՝

- անձը չունի կենսաթոշակի իրավունք,
- կենսաթոշակի իրավունք ունեցող անձը, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված չէ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով,
- ներկայացված փաստաթղթերը եւ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները բավարար չեն անձին կենսաթոշակ նշանակելու համար:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու կամ անձին կենսաթոշակ նշանակելու եւ լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝ նշելով մերժելու պատճառները եւ որոշումը բողոքարկելու կարգը: Ի դեպ, աշխատող կենսաթոշակառուների կենսաթոշակը վերահաշվարկվում է, եթե կենսաթոշակը նշանակելուց (վերահաշվարկելուց) 12 ամիս հետո կենսաթոշակառուն ներկայացրել է կենսաթոշակը նշանակելուց (վերահաշվարկելուց) հետո աշխատած ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվառելու դիմում:

Ընդ որում, վերահաշվարկված կենսաթոշակը նշանակվում է դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ, թե ովքեր կարող են դառնալ գյուղատնտեսական կոոպերատիվի անդամ:

Արտակ Հասրաթյան (50 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ա. Հասրաթյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ, համաձայն «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, կոոպերատիվի անդամ կարող են դառնալ իրավաբանական եւ տասնվեց տարին լրացած ֆիզիկական անձինք:

Տասնվեցից մինչեւ տասնութ տարեկան ֆիզիկական անձինք կարող են դառնալ կոոպերատիվի անդամ ծնողի, որդեգրողի կամ հոգաբարձուի կամ խնամակալության եւ հոգաբարձության մարմնի համաձայնությամբ կամ դատարանի որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կոոպերատիվի կողմից առաջարկվող ծառայությունները պետք է օգնեն արտադրողին արդյունավետությունը եւ որակը բարելավելու հարցում: Բոլոր ծառայությունների ապահովման նպատակով կոոպերատիվը միշտ պետք է հաշվի առնի արտադրանքի համար նախատեսված վերջնական շուկան:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը եւ Ֆրանսիայի՝ Եվրոպայի եւ արտաքին գործերի նախարար Կատրին Կոլոննան այցելել են Երեւանի «Եռաբլուր» զինվորական պանթեոն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 8	+12 + 16
Կոտայքի լեռներ	+ 3 + 6	+12 + 14
Կոտայքի նախալեռներ	+ 8 + 10	+18 + 20
Գեղարքունիք	+ 2 + 6	+12 + 17
Լոռի	+ 4 + 8	+17 + 20
Տավուշ	+ 7 + 12	+20 + 24
Արագածոտնի լեռներ	+ 3 + 7	+12 + 14
Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 11	+18 + 22
Արարատ	+ 9 + 12	+22 + 25
Արմավիր	+ 8 + 10	+22 + 24
Վայոց ձորի լեռներ	+ 3 + 6	+14 + 17
Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 11	+18 + 22
Սյունիքի հովիտներ	+11 + 14	+25 + 30
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8	+20 + 26
Արցախ	+11 + 15	+27 + 32
Երեւան	+ 9 + 11	+21 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **28 .04.2023**
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*